8. ԷՐԿՈՒ ԱՌՈՒՏՈՒՐԱԿԱՆ

Էրկու առուտուրական հընգյերանըմ ըն, ամմա̈ն գո̈նըմ առը-տուրը մինտեղ ըն անըմ, ու̈րա̈նք էլ շատ սերավ ըն ինըմ։

Ըտրանք ու̈րու̈ր խոսկ ըն տամ, վեր էս մինին թա տըղա ինի՛, էն մինին ախճի՛գյ, մըծընալանը ետը ու̈րու̈ր նըհետ փսակին, պարե-կամ տըեոնան, ըհա̈ իտի ել ինըմ ա։

Մինին ախճիգյ ա ինըմ, մինին՝ տըղա։

Պուճուր վըխտանց ախճիգյը նան տըղան մին տեղ ըն մըծանըմ։ Ըտրանց փըսըկելի վախտը կյամ ա։ Ըտրանց հա̈րերը լա̈վ հըրսա-նիք ըն անըմ, փըսակըմ։ Ծուրա̈նք էլ էնքան սերավ ըն ինըմ, վըեր էլ ասվիլ չի՛։

Ըտրանք ամմեն օր ասծու ղաչանք ըն անըմ, վըեր էրկուսին միշտ էլ իտի սերավ պահի, մըռնելի վախտն էլ մին տըեղ տանի։

Ամմա ինգի յա պըտահըմ, վըեր աստուծ մին տըեղ չի տանըմ։ Առաշ կընգանն ա տանըմ։

Տըղան վըեշ օտըմ ա, վըեշ խմըմ, օղըմ էլ չի, թա լու̈ս աշխարք տուս կյա։ Նա թողըմ չի վըեր կընգանը թաղին հանգյիստարանըմը, թաղիլ ա տամ ու̈րա̈ն օթախին տեմացը, վըեր ամմեն օր ընգրա կյրեզմանը տըեսնա։

Մին քանի օրանը ետը նա լոմը յոր ա օնըմ, ու̈րա̈ն օթախան միչև կընգանը հանգյիստը տափին տակավը քանդըմ։ Քըշերնին քյընըմ ա կընգանը ղութուն կոշտը, ցիրեկնին կյամ ու̈րա̈ն օթախը։

Մին դօ̈նըմ ուրա̈ն կընգանը ղութուն քըշտան վըեր կյամ ա ուրա̈ն օթախը, տըեսնըմ ա ստոլին յըրան մին կյիր տիրա̈ծ։

Էտ կիրը յոր ընըմ, պեց անըմ կարթըմ, տըեսնըմ կյիրին յրան կյըրա̈ծ. «Էս կիրը վըեր մըեռած մարթի քուշտի կարթիք, մըեռած մարթը կըսըղանա»։

Տըղան ղա̈ստի կյիրը տանըմ ա ղութուն կոշտը, իրեք օր ուրուր հետա կարթըմ, պըրծընըմ։

Մին էլ ա տըեսնըմ, վըեր կընեգյը մըեռած տըեղան եր կացավ։ Ըտրանք էտ տափին տակին քանդած տըեղավը տուս ըն կյամ, կյամ ուրա̈նց օթախը։ Տըղան հրամմայըմ ա ծառին, վըեր էրկու փայ օտելի պըեն պըերի։ Ծառան զարմանըմ ա, թա̈ խե՞ յա էրկու փայ օզըմ։ Էտ հի՞նչ պըեն ա, առաչ իսկի մին պաժին էլ չար օտըմ, մըհենդյ էրկու պաժին ա օտըմ։ Էտ ծառան թաքուն տըռա̈նը ծական եշըմ ա, արեսնըմ, վըեր էտ տըղան ուրա̈ն կընգանը նըհետ նստած հաց ա օտըմ։ Տա ղա̈ստի քյըլնըմ ա էտ տըղին հորը ասըմ։

Տըղին հա̈րը կյամ ա տըեսնըմ դուզ։ Մարթ ա ղըրկըմ ըխճկանը հա̈րը կյամ ա, տըեսնըմ, ուրխանըմ։ Էտ վախտը ինդի մին ա̈դա̈թ կար, վըեր մըեռած, մին էլ սըղացած մարթին նըհետ ապրիլ չըն, ժողովուրթըն էլ կլսի, լա̈վ չի՞։ Ըտրա հետի էլ ըտրանց ասըմ ըն, վըեր մարթըկընեդյ եր կընենան քյինին մին օրիշ քաղաքըմ ապրին։ Տըղան սաղի յա կընենըմ։ Հա̈րերը լա̈վ փող ըն տամ, վըեսկե, ամման հինչ, ըտրանց ճընապա տընըմ։

Մին դօ̈նըմ էտ քաղաքին թաքավերը ըտրանց տանը քըշտավը անց կընենալիս տըեսնըմ ա էտ կյեղեցիկ կընգանը, ասըմ. — Տու էտրան կյեղեցիկ, փըսակվալ ըս մին դուքյա̈նչու նըհետ, էն քյըեզ սազըմ չի, քյըեզ թաքավերական թախտ ա սազըմ։ Թ՚ա օզըմ ըս, եք իմ կընեդյս տըեռ, յըես քյըեզ թաքուհու նման կըպահիմ, կըլխիտ էլ թա̈քյ կտինիմ։ Էս քաղաքը իմն ա, էս ժողովուրթն էլ իմ դյաղեքս ըն։

Էտ կընեգյը փառքը-պատծանք սիրող ա ինըմ, ռազի յա կըենըմ, դա̈ստի ըտրա նըհետ փայտոն ա նըստում, քյըընըմ, խոխան թողելավ հըետան լա̈ց ինելիս։ Քյըսօրին մարթը կյամ ա, թա հաց օտի, տըեսնըմ կընեդյը կա վըեչ, տոնը լոխ եր ածած, խոխան լա̈ց ինելիս։

Հըրեաններան հըրցնըմ ա, թա կընեգյը հո՞ր ա, ըդրանք ասըմ ըն, վըեր թաքավերին նըհետ փայտոն նստած քյեցալ ա, համ էլ ասալ ա, վըեր տու ուրա̈ն ըսպասիս վըեչ։

Էտ մարթը մընըմ ա մա̈թա̈լ, տըեղը կաղնած։ Էքսը դուքյա̈նը

քըլլըմ ա, տոն, տըեղ թողըմ, քյընըմ կընգանը հետան։ Նըհետն էլ մին խիլլա փող, վըեսկե յա յոր օնըմ։

Թաքավերը էտ կընգանը տանըմ ա ծովավը անց կըցնըմ դիրի տենը, հրամման տամ, վըեր վըեշ մինը էտ ղոլերքը անց չի կըենան, քյինին վեչ։

Էտ առուտուրականը մին նավ ա առնըմ, ծովավը քյընըմ, քյընըմ, հըսնըմ մին օրիշ քաղաք։ Էտ քաղաքըմը ման ա կյամ, մա՜ն, մին սապոժնիկի յա թուշ ինըմ։

Առուտուրականը ընդըրան ասըմ ա. — Ախպե՛ր, օրը հի՞շքան ըս փող ըշխադըմ։

Սապոժնիկն ասըմ ա. — Եշած կործին, հիշքան տամ ըն, էնքան էլ յոր ըմ օնըմ։

Էտ առուտուրականն ասըմ ա. — Եք ըխպըրանանք յըես նան տու, հիշքան փող ըս օզըմ, քյըեզ կըտամ, մինակ թա՛ք լհա ինձ դեմ չի քյընաս, թա՛ք լհա ինձ նըհետ մին խոսկի ինի՛ս, դուզ ինիս։

Էտ սապոժնիկը ռազի յա կըենըմ։

Առուտուրականը մին խիլլա փող, վըեսկե ա տամ ըտրան, համ էլ ըտրան ա տամ էն մըեռալ սըղըցնող կյիրը, ասըմ. — Ցըես լըսալ ըմ, վըեր իմ նամարդ կընեգյըս պերալ ըն ըստըեղ, էն ա թաքավերին ծըեռքին, յըես քյինալու յըմ պալատըմը գյադա նի մըննիմ։ Բալքամ ինձ նըհետ մին պըեն ա պըտահըմ, բալքամ ինձ սպանըմ ըն։ Էս կյիրը կտինիս քըշտիս, կկարթիս կըլխանըս երը կաղնած, էն վախտը յըես եր ըմ կըենալու, սըղանալու յըմ։

Էտ առուտուրականը քյասիբի շորեր ա կյենըմ, քյընըմ կաղնըմ քաղաքին մեյդանըմը, ըշտեղ հաըուստնին կյամ ըն ուրանց հետի գյադա-գյուդա փըռնըմ։

Մին էլ ա տըեսնըմ թաքավերին վազիրը կյամ ա դիբի ուրան, ասըմ. — Ա՛յ գյադա, կկարի՞ս փեդ կըտորիս, ճուր կըրիս, հայաթ սըրփիս։

— Խե՞ չըմ կարիլ, հալա ջանըս էլ տուս կկյա։

Վազիրը ըտրան յոր ա օնըմ, տանըմ պալատը։

Կընեգյը վըեր մին քանի օրանը ետը տըեսնըմ ա ուրան մարթին, թաքավերին անա խնթըրըմ ա, վեր էտ մարթին տուս քըցին, ամմա թաքավերը ասըմ ա. — Օզիլ չի՜, թող ըստեղ կենա գյադոթուն անի։

Մին հետ էլ թաքավերը էտ կընգանն ասըմ ա. — Ա՛ կընեգյ, էսքան վախտ ա քյըեզ նըհետ ապըրըմ ըմ, ամմա հալա իմ մըեծա-

մըեծնիս գյուղում չըն, թա տու իմ կընեգյս ըս, եք մին լա̈վ թաքավըրական քյեփ սարքինքյ, կյան մըեծ շնհավըր անին։

Էն մին օրը ըսկըըմ ըն պադրաստութըննի քաշիլը։ Էտ գյադին էլ հրամմայըմ ըն, վըեր ճո̈րին առաչը բըցի, քյինի, առած տըեսըտըենը կըրրի։ Գյա̈դա̈ն իտի էլ անըմ ա։ Ամմա էտ կընեգյը ըտրա տըերածը թաքուն լոխ կյըտն ա ածըմ։

Թաքավըրը ուրու̈ղյու̈նը առոք-փառոք կյամ ա մըեծ զալըմը նստըմ, վըեր սեղան պըեց անին, տըեսնըմ ա՝ զատ չի կա։

Կընդանան հըրցընըմ ա, թա.— Էս հի՞նչ պըեն ա, էս հինչ կործ ա, րա խե՞ յըք իմ անըմըս, իմ պաղըըս տափը քըցըմ, պա հո՞ր տ սարքած ստոլը, բա համոթ չի՞, էս ա նա̈ղիր-վա̈ղիրնիս, մըեծամըեծնիս կյա̈լու յըն։

Էտ կընեգյը ասըմ ա.— Հի՞նչ պադրաստութըն ըս քաշալ, հի՞նչ ինի։ Թաքավըրը կանչըմ ա ծառաննըրին, դյղոտանցը, ասըմ.
— Պա խե՞ չըք իմ հրամմաննես կադարալ։

Ծըռոտենքը ասըմ ըն,— Թաքավըրը ապրած կընենա, հինչու̈ հրամմայալ ըս, լոխ կադարալ ընք, օտելի պեննըրը ճո̈րավը կըրրողն էլ էս ա իլա̈լ։

Թաքավըրը կըղնըվըմ ա, ասըմ.— Տարեք, էս սըհաթիս ըտրա կըլլխը կըտրեցեք։

Էտ մին գյա̈դա̈ն թաքավըրին վըեննըրն ա ընգնըմ, ասըմ.
— Թաքավըրը ապրած կընենա, հինչու առալ ըն ինձ տըվալ, ճո̈րուն յըրան պեռնած լոխ կըրրալ ըմ, սըըրալ պալատը։

Թաքավըրը հըվատըմ չի։ Ղոնաղնին սկսըմ ըն հըվաքվիլը։ Ճարը կըտրված թաքավըրը հրամմայըմ ա՝ պալատին քաշի ըմրրներըմը հինչ օտելի պըեն կա, ընդրանա աշպաղնին իփին, պադրաստին, լա̈վ ստոլ պըեց անին։ Իտի էլ անըմ ըն։

Վըեր լոխ հըվաքվըմ ըն, ուրանց աըեղըրը նըստոտըմ, թաքավըրը արեղան եր ա կընենըմ, ասըմ.—Պատվըելի նա̈ղիր-վա̈ղիրնի, հարկելի մըեծամըեծնի, յըես հրամմայալ ըմ ծըեզ հետի մին լա̈վ քյեփ սարքին, մին ամման հինչավ լիղը մըեծ ստոլ պըեց անին, ամմա մըեր անխելք գյա̈դա̈ն հինչու առալ ընք, պալատը չի պերալ, ինձ էլ ծըեր քըշտին թողալ ա համոթալի։ Էտ գյա̈դա̈ն մըհենգյ էն ա ղուսաղխանըմը, ընդրան թողըմ ըմ ծըեր դաղաստանին, հինչ պատիժ ասիք, ինդի յըմ անելու տալու։

Էտ ղոնաղ մըեծամըեծնին որոշըմ ըն էտ գյադին էն մին օրը մեյդանըմը կախ տան, սաղ ժողովուրթին առաչին։ Քըշերավը թաքավըրը հրամման ա տամ, վըեր մեյդանըմը մին սուն տընգին, էտ

գյաղին կախ տան։ Սաղ ժողովուրթը հրվաքվում ա։ Համին էն սապոժնիկն էլ ա կյամ։ Քյանդիրը քրցրմ ըն էտ գյաղին վիզը, կախ տամ։

Կընեգյը թաքավերին անա խընթրըմ ա, վեր տանին մին հեռու տրեղ թաղին, յրան էլ պահակ կրղնցնին, տանին վրեչ հանգյիստարանը։ Էն մեռալ սրղրցնող կյիրին անա խոսըմ չի, թաքուն ա պահրմ։ Դե էտ թաքավերը հի՞նչ ա գյուդում, թա էտ գյաղան էտ կընգանը առաչվա մարթն ա։

Իտի էլ անրմ ըն։ Տանրմ ըն մին հեռու տրեղ թաղրմ, յրան էլ պահակ կրղնրցնրմ։

Սապոժնիկը էտ լոխ գյուդում ա։ Մին բոթիլ արաղ ա յոր օնրմ, քյընրմ էտ պահակին կոշտը, ասրմ.— Խեր ինի ախպեր, խե՞ յրս ըտեղ կաղնած։

Պահակը ասրմ ա. — Մրեռալին յրան պահակ ըմ կաղնալ, վրեր փախչի վրեչ։ Ըստրա գյոռը ըստի-ըստի... սաղ փրդացալ ըմ, էնքան ցորտ ա, հինչ ցորտ, այաղ ա, ղրյամաթ ա, տրեսնրմ չը՞ս հունց ա ասթխերը փրլրստրատին տամ, այաղ վախտը միշտ իտի յա ընը՞մ։

Էտ սապոժնիկն էլ ասրմ ա. — Բա յանի իտի պրեն կինի՞, իտի օյին կինի՞, վրեր մրեռալին էլ ղարավուլ քաշին։

— Էլ ասիլ մի, մրեր թաքավերը էնքան հիմմարացալ ա, վրեր մրհենգյ էլ խուտուրու-մուտուրու հրամմանի յա տամ, խելքը քամեն տարալ ա։ Ասի, ա սարսաղ շան տրղա, բա յանի մրեռալին յրան էլ ղարավուլ կքաշին... էտ էլ թաքավեր չի տրեռավ մրեզ յրա, մին դաարդրբալա տրեռավ, մին օզգյա բաբաթ պրեն տրեռավ։

— Ա՛րա, պրեն չօնի՞ս, ղարավուլրս վե՞րն ա, նրստի մին խրրեգյ արաղ խրմինք, քյեփրնիս պրեց անինք։

Սապոժնիկը համ ասրմ ա, համ էլ արաղը ուրուր հրետա ածրմ, էտ ղարավուլչուն խրմրցնրմ, հրրփրցնրմ։ Ղարավուլչին կոնձելանը ետը թեքյ ա ընգնրմ, քոն ինրմ։

Սապոժնիկը ծրեռաց կյրրեզմանը քանգրմ ա, մեյիդը հանրմ, էտ կյրրեզմանը հունցը իլալ ա թազադան ինդի շինրմ, մեյիդը յոր օնրմ, տոն կյամ, մեյիդը թողրմ տանը, ինքը էլհա քյընրմ էն ղարավուլչուն կոշտը, տրեսնրմ հալա էն ա քոն իլած։

Եր ա կրցնրմ ասրմ.—Ե՛ր կաց, ա՛րա, եր՛ կաց, բա տրեսնրմ չը՞ս, լուսանրմ ա, եր կաց տրեղտ կաղնի, թա չէ մրեռալը կփախչի, թաքավերն էլ քյրեզ կտինի էտ մրեռալին տրեղը։

Վրեր էտ ղարավուլչին եր ա կրենրմ, էտ սապոժնիկը ետ ա տրեռնրմ, կյամ ուրան տոնը։ Էտ մեյիդին քրշտին իրեք օր էտ կյիրը կար-

թըմ ա, մնյիզը սըղանըմ ա, տըեղը կաղնըմ։ Էտ առուտուրականը շատ շունրակալ ա ինըմ էտ սապոժնիկան։

Մին քանի վախտանը ետը մին խա̈բա̈ր ա չավ ընգնըմ, թա̈ Թա-քավըրին մտղար տըղան ծանդրը հիվանդ ա, հա̈քյիմնին կարըմ չըն, թա ճար անին։ Թաքավըրը հրաման ա տըվալ, վըեր հու վըեր ուրա̈ն տըղին լըվըցնի, թաքավըրոթունին կըեսը ընդրա կըտա։

Էտ առուտուրականը վըեր էտ խա̈բա̈րը լըսըմ ա, իրեսը եր ա անըմ, լա̈վ-լա̈վ շորեր ա կյենըմ, կյիրն էլ յոր օնըմ, քյընըմ պալատը։

Թաքավըրին գյա̈ղեքը ասըմ ըն, վըեր խստի-խստի մին մարթ ա եկալ։

Թաքավըրը ուրա̈ն կոշտն ա կանչըմ, ասըմ.— Պարով, հազար պարի յըս եկալ, թա̈ կըրեցիր իմ տըղիս մին ճար անիս թաքավըրո-թունիս կըեսը քյըեզ ըմ տալու, թա̈ կըրեցիր վըեչ, կըլոխտ թըռ-ցընելու յըմ։

Ըհա̈ էտ խոսկին մըեչըմը, դյըդո̈տենքը լա̈ռ ինիլա̈վ կյամ ըն Թա-քավըրին առաչին չոքըմ, ասըմ.— Թաքավըրը ապրած կըենա, վըեզը կըլխներիս ա տըեռալ, տըներնիս քանդվալ ա, բա ասիլ չը՞ս խոխան մըեռալ ա։

Թաքավըրը սորը հանըմ ա, թա էտ ասողին կըլոխը կըտրի, էտ առուտուրականը ըըլա̈կա̈ն փըռնըմ ա, թողըմ չի էտ գյա̈դին տղանի, ասըմ ա.— Թաքավըրը ապրած կըենա, վախիլ մի, յըես կըրդըրցնիմ, մինա̈կ մին պայմանավ, վըեր իրեք օր թողիս վըեչ էտ օժախիան մինն էլ ա մըռտանա։

Թաքավըրը խոսկ ա տամ, վըեր թողիլ չի…

Իրեք օրանը ետը թաքավըրին տըղան սաղ-սալամաթ քյընըմ ա ուրա̈ն հորը առաչին կաղնըմ։

Թաքավըրը էտ առուտուրականին ա տամ թաքավըրոթունին կըեսը։ Ամմա էտ առուտուրականը օզըմ չի, ասըմ ա.— Տեր-Թա-քավըր, մինա̈կ ըհա̈ իրեք օրավ քու թաքավըրոթունըտ ինձ տու, ընդրանա եար քյըեզ ինի։

Թաքավըրը ռազի յա կըենըմ։

Վեր էտ առուտուրականը թաքավըրին թախտին նըստըմ ա, էն սապոժնիկին կանչըմ ա լա̈վ-լա̈վ բաղարկեք տամ, համ էլ թաքուն ասըմ.— Յըես էրկու օրանը ետը ժողով ըմ ընելու, ժողովուրթը մեյդանըմը հըվըքվելու յըն։ Յըես ըսելու յըմ, թա էս թաքավըրը հինչ փիս պըեններ օնի, ըսեցիք։ Տու կասիս, թա էտ թաքավըրը ըստի-րոաի փիս պըեններ ու ըրալ, դյա̈դին կախ ա տըվալ, եսավ իտի փիս-փիս պըեններ կասիս։

Իտի էլ անում ըն։ Էտ առուտուրական-թաքավերը ժողովուրթին հըվաքում ա, հըրցնում, թա. — Ա՛յ ժողովուրթ, ասեցի՛ք տեսնում ծրեր թաքավերը ծրեզ հո՞ւնց ա պահալ, հու չըրշարալ չի՞, հու ծրեր ջանին եղը քաշալ չի՞, հու ծրեզ մանգյանի տակ չի՞ քըցալ, վախիլ մի՛ք, ասեցի՛ք, հինչու գյուդում ըք։

Դե հիշքան չինի ժողովուրթին աշկը վախած ա, էն հու՞ կը կարի մին խոսկ ասի, լոխ սուս ըն անում, կուրկուի կյամ, թա ծուկնը կխոսի, ինգի էլ ուրանք։

Համին էտ վախտը ժողովուրթին մեչան մինը ծայն ա խընթրում, էտ համին սապոժնիկն ա ինում, ասում ա. — Թաղա թաքավերը ապրած կըենա, տու գյուդում ըս էտ թաքավերը հինչ սրեվ սրտանա յա իլալ, մին զուլում, մին պատիժ, աստուծ ըտրա յրան կըրակ եր ածի, հինչու օտի քըթըծրկերավը եր ածի՞, տա մրեզ կըերալ ա, պըկին մընա մըղանա կըերա՞ծը, տանը պեն չի մընա մըղանա տարածան... էն օրը՛ն էլ ուրան գյադին կախ տըվավ, հալա ղարավուլչի ել տիրավ կյրեզմանին քըշտին, վրեր եր չի կըենա, փախչի։ Պա ըտրան աստուծ օնի՞՞։

Էտ վախտը էն իսկական թաքավերը աշկերը էտ սապոժնիկին յրան պըլըզում ա, չըռում, ամմա էլհա սապոժնիկը ասում ա. — Պա ըտրան ինսափ օնի՞՞, հենց ա լհա կյարմուր կյուլ ինի, էնքան կըերալ ա, մին առչ ա տրեռալ, հենց ա լհա մին տըռըտոմբալ ինի՞, մին քառասուն վրեդրանոց կյինու պոժկա ինի՞։ Ա՞ ժողովուրթ, թող կյա հալա ծրեր առաչին կլըպընդրիկի տա՞, վրեր լոխ ասում չը՞մ, մին փարա պրեներ կյեղում ը՞մ։

Թաղա թաքավերն ասում ա.— Ա՛ ժողովուրթ, պա հինչ պա՞տիժ տանք էս թաքավերին։

Ժողովուրթը ասում ա. — Կախ տանք, կախ տանք էտ ոնանախումին։

Պըերում ըն մեյդանըմը մին սուն տընգում, էտ առաչվա թաքավերին կախ տամ, մեյիդըն էլ տանում համին էն «գյադին» կյրեզմանին քըշտին թաղում։

Ըտրանա ետը էտ առուտուրական թաքավերը քյընում ա ուրան կընգանը կոշտը, ասում. — Տու ինձ ճընանչում ը՞ս։

Էտ կընեգյը ուրան ինգի յա նշանց տամ, գյվաքիս ճընանչում չի։

Էտ առուտուրականը կըզնըվում ա, ասում. — Ա՛յ հարամ կաթնակըեր, ա՛յ իրեսը սրեվ, պա տու ինձ ճընանչում չը՞՞ս, քու ըստինըտինդինըտ։ Ասում ա, սորը հանում, էտ կընգանը կըլոխը թրոցնում։

Ըտրանա ետը էն թաքավերին թախտը մընում ա տրեռտակ,

ժողովուրդը ուրան մրեչան արժանի մարդ ա հոկում, վրեր կառավարի։ էլ վրեչ մին մարդ վախում չի, ըսկըսում ըն ազադ ապրիլը, ազադ խոսիլը։

էտ առուտուրականրն էլ ուրան հետի մին լավ, հավադարիմ կընեդ։ ա հարում, նըհետը փըսակվում, բախտավեր ապրում։